

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-567-15.04.2020-ՏՏԳԲ-011/0) ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Աննա Կարապետյան	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (Կ-567-15.04.2020-ՏՏԳԲ-011/0)	1. Նախագծի 5-րդ հոդվածը լրացնել. «նույն նախադասությունը «սահմանված դեպքերում» բառերից հետո լրացնել «մեծամասնական ընտրակարգով ընտրվող» բառերով »	Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
2.		Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածում. « ընտրվող » բառը փոխարինել «անցկացվող » բառով:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է
2.		Նախագծի 8-րդ հոդված	հանել «ընտրվող » բառը:	Կատարվել է համապատասխան	Ընդունվել է

				փոփոխությունը	
3	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	« ընտրվող » բառը փոխարինել «անցկացվող » բառով:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	
4.	Նախագծի 13-րդ հոդված	Հոդված 104.1-ի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. « 4. Մինչեւ 4000 ընտրող ունեցող համայնքներում (բացառությամբ բազմաբնակավայր համայնքների) համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրակարգով:»:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	
5	Նախագծի 13-րդ հոդված	Հոդված 104.1-ի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. « 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում; ինչպես նաեւ բազմաբնակավայր համայնքներում համայնքի ավագանու ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով:»:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	

6		Նախագծի 13-րդ հոդվածի 6-րդ մասի	2-րդ կետում «1000-ից մինչև 2000» բառերը փոխարինել «1 001-ից 2000» բառերով, 3-րդ կետում« 2000-ից» բառերը փոխարինել «2001-ից» բառերով, 4-րդ կետում «4000-ից մինչև» բառերը փոխարինել «4 001-ից» բառերով, 5-րդ կետում «10000-ից մինչև» բառերը փոխարինել «10001-ից» բառերով, 7-րդ մասում «Սույն մասում նշված ընտրողների» բառերը փոխարինել «Ընտրաողների» բառով:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է
7		Նախագծի 16-րդ հոդվածում	«500» թիվը փոխարինել «501 » թվով, «1000» թիվը փոխարինել «1001» թվով, հանել «Սույն մասում նշված ընտրողների թիվը յուրաքանչյուր համայնքի համար հաշվարկվում է՝ հիմք ընդունելով սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան տրամադրված տեղեկանքում նշված ընտրողների թիվը» նախադասությունը:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է
8		Նախագծի 18-րդ հոդվածի1-ին մասի 3-րդ կետ	«1-ին» բառերը փոխարինել «6-րդ» բառերով:	Կատարվել է համապատասխան	Ընդունվել է

				փոփոխությունը	
9		Նախագծի 32-րդ հոդված	Հոդված 142.2-ի 9-րդ մասում «անց է կացվում» բառերը փոխարինել «անցկացվում է» բառերով:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է
10		Նախագծի 32-րդ հոդված	Հոդված 142.3-ի 5-րդ մասում «անց է կացվում» բառերը փոխարինել «անցկացվում է» բառերով:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է
1	Պետաիրավական փորձաքննության բաժին	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի վերնագիր	Նախագծի (այսուհետ նաեւ՝ Նախագիծ) վերնագրում նշված սահմանադրական օրենք հանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում սահմանադրական օրենք հանդիսացող օրենսգրքի վերնագիրը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին՝ հաջորդաբար շարադրելով օրենքի ընդունման տարին,	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է

			ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «սահմանադրական օրենք» բառերը:		
2	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածի մասերն առաջարկում ենք տեքստից բաժանել միջակետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը: Նույն առաջարկը վերաբերելի է նաեւ Նախագծի 12-րդ, 19-րդ, 26-րդ, 29-րդ եւ 30-րդ հոդվածներին:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	
3	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (այսուհետ նաեւ՝ Օրենսգիրք) 52-րդ հոդվածի 1-ին մասի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 11-րդ կետում «համամասնական ընտրակարգով ընտրված համայնքների ավագանու» բառերից հետո առաջարկում ենք եւս կատարել «(բացառությամբ Երեւանի ավագանու)» նշումը:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	
4	Նախագծի 13-րդ հոդված	Նախագծի 13-րդ հոդվածում «Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 4.1-րդ բաժնով» բառերն առաջարկում	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	

			<p>ենք փոխարինել «Օրենսգրքում լրացնել նոր՝ 4.1-ին բաժին» ձեակերպումով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 104.1-ին հոդվածի համարը տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը:</p> <p>Բացի այդ, հարկ ենք համարում նշել, որ Նախագծի 13-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերող 4.1-ին բաժինը ներառում է միայն մեկ գլուխ՝ ընդհանուր դրույթների վերաբերյալ 18.1-ին գլուխը, որն էլ իր հերթին կազմված է միայն մեկ հոդվածից: Կարծում ենք, նպատակահարմար չէ Նախագծով կատարվող լրացումը նման եղանակով կատարելը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական</p>		
--	--	--	--	--	--

			<p>ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ «Օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում: Գլուխները կարող են միավորվել բաժիններում, իսկ բաժինները՝ մասերում: Անհրաժեշտության դեպքում բաժինները կարող են բաժանվել ենթաբաժինների՝ միավորելով առանձին գլուխներ» :</p> <p>Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 32-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ համայնքի ղեկավարի ընտրության վերաբերող 7-րդ բաժնին, քանի որ այն ներառում է միայն մեկ գլուխ՝ համայնքի ղեկավարի ընտրության անցկացման կարգի վերաբերյալ 30.1-ին գլուխը:</p>		
5		Նախագծի 18-րդ հոդված	<p>Նախագծի 18-րդ հոդվածով Օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ եւ 7-րդ մասերում «105-րդ հոդվածի 3-րդ մասում» բառերը փոխարինվում են «104.1-ին հոդվածի 1-ին մասում» բառերով:</p> <p>Օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ եւ 7-րդ մասերը</p>	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է

			<p>նախատեսում են հետեւյալ կարգավորումները.</p> <p>«2. Համայնքում ընտրվում են առավելագույն թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած, սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասում նշված համապատասխան թվով ավագանու անդամի թեկնածուները : Կողմ քվեարկված քվեաթերթիկների հավասարության դեպքում ընտրված թեկնածուին որոշելու համար նրանց միջեւ անցկացվում է վիճակահանություն:</p> <p>()</p> <p>7. Համայնքի ավագանու անդամների ընտրությունը համարվում է չկայացած, եթե սույն օրենսգրքով թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետում եւ կարգով գրանցված թեկնածուների թիվը պակաս կամ հավասար է սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասում նշված՝ համայնքի ավագանու անդամների թվին , կամ գրանցումից հետո թեկնածուների թիվը նվազում է սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի</p>		
--	--	--	--	--	--

			<p>3-րդ մասում նշված՝ համայնքի ավագանու անդամների թվիկեսից, կամ վերաքվեարկության արդյունքների հիման վրա համայնքի ավագանու ընտրությունն անվավեր է ճանաչվել»:</p> <p>Հարկ է նկատել, որ Նախագծի 15-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվում Օրենսգրքի 105-րդ հոդվածը, իսկ Նախագծի 13-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 104.1-ին հոդվածի 1-ին մասը նախատեսում է հետեւյալ կարգավորումը. «1. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները անց են կացվում մեծամասնական կամ համամասնական ընտրակարգով»:</p> <p>Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենսգրքի 119-րդ հոդվածում հղում կատարել Նախագծի 13-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 104.1-ին հոդվածի 6-րդ մասին, այն է՝ «6. Համայնքի ավագանին բաղկացած է՝</p> <p>1) հինգ անդամից՝ մինչեւ 1 000</p>		
--	--	--	---	--	--

			<p>ընտրող ունեցող համայնքում. 2) յոթ անդամից՝ 1 000-ից մինչև 2 000 ընտրող ունեցող համայնքում. 3) ինն անդամից՝ 2 000-ից մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքում. 4) տասնհինգ անդամից՝ 4000-ից մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքում. 5) քսանմեկ անդամից՝ 10 000-ից մինչև 25 000 ընտրող ունեցող համայնքում. 6) երեսուներեք անդամից՝ 25 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում. 7) 65 անդամից՝ Երեւան քաղաքում: Սույն մասում նշված ընտրողների թիվը յուրաքանչյուր համայնքի համար հաշվարկվում է՝ հիմք ընդունելով սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան տրամադրված տեղեկանքում նշված ընտրողների թիվը»:</p>		
6		Նախագծի 23-րդ հոդված	Նախագծի 23-րդ հոդվածը նախատեսում է հետևյալ կարգավորումը. «Օրենսգրքի 125-րդ հոդվածում, 126-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում,	Թողնվել է գործող օրենքի ձևակերպմամբ:	Չի ընդունվել

			<p>26-րդ գլխի վերնագրում, 127-րդ հոդվածի վերնագրում, 2-րդ մասի 2-րդ պարբերությունում, 27-րդ գլխի վերնագրում ,129-րդ հոդվածի վերնագրում եւ 1-ին մասում , 28-րդ գլխի վերնագրում , 29-րդ գլխի վերնագրում «Երեւանի, Գյումրու եւ Վանաձորի» կամ «Երեւանի, Գյումրու, Վանաձորի» բառերը փոխարինել «Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների» բառերով»:</p> <p>Մինչդեռ հարկ է նկատել, որ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում, 27-րդ գլխի վերնագրում, 129-րդ հոդվածի վերնագրում եւ 1-ին մասում, 28-րդ գլխի վերնագրում կիրառվում են «ավագանու անդամ» բառերը, որոնց նկատմամբ կարծում ենք կիրառելի չեն «Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների» բառերը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաեւ Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասով Օրենսգրքի 130-րդ հոդվածի վերնագրում կատարվող փոփոխությանը եւ 30-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենսգրքի 141-րդ հոդվածի 6-</p>		
--	--	--	--	--	--

			րդ մասում կատարվող փոփոխությունը:		
7	Նախագծի 28-րդ հոդված	Նախագծի 28-րդ հոդվածը նախատեսում է հետեւյալ կարգավորումը.«136-րդ հոդվածի վերնագրում եւ բովանդակության մեջ, 137-րդ հոդվածի վերնագրում «Երեւանի, Գյումրու եւ Վանաձորի» բառերը փոխարինել «Համայնքի» բառով»: Առաջարկում ենք Օրենսգրքի 136-րդ հոդվածի վերնագրում եւ բովանդակության մեջ, 137-րդ հոդվածի վերնագրում Երեւանի, Գյումրու եւ Վանաձորի» բառերը փոխարինել «Համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի» բառերով:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	
8	Նախագծի 32-րդ հոդված	Նախագծի 32-րդ հոդվածի «Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 7-րդ բաժնով» բառերն առաջարկում ենք փոխարինել «Օրենսգրքում լրացնել նոր՝ 7-րդ բաժին» ձեակերպումով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	

9	Նախագծի 32-րդ հոդված	<p>Նախագծի 32-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 142.1-ին հոդված. «Հոդված 142.1. Համայնքի ղեկավարի ընտրությունը 1. Սույն բաժնի իմաստով համայնքի ղեկավար է համարվում համամասնական ընտրակարգով ձեւավորված ավագանու կողմից անուղղակի ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարը» : Օրենսգրքում լրացվող նոր՝ 142.1-ին հոդվածի վերնագիրն առաջարկում ենք համապատասխանեցնել հոդվածի բովանդակությանը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:</p>	<p>Նշվում է, որ «Սույն բաժնի իմաստով համայնքի ղեկավար է համարվում համամասնական ընտրակարգով ձեւավորված ավագանու կողմից անուղղակի ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարը»: Սույն բաժնի մեջ մտնում է նաև բաժնի վերնագիրը, ուստի փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:</p>	Չի ընդունվել
10	Նախագծի 32-րդ հոդված	<p>Նախագծի 32-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվում է համայնքի ղեկավարի ընտրությանը վերաբերող նոր՝ 7-րդ բաժին, որի 30.1-ին գլխի համամասնական</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխությունը</p>	Ընդունվել է

			<p>ընտրակարգով ձեւավորված ավագանու կողմից անուղղակի ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի ընտրության անցկացմանը վերաբերող 142.2-րդ հոդվածի 9-րդ մասը նախատեսում է հետեւյալ կարգավորումը. «Երեւանի քաղաքապետի ընտրությունը անց է կացվում սույն հոդվածով սահմանված կարգով»:</p> <p>Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրության 181-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով: Բացի այդ, ««Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով ««Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածում լրացվում է նոր՝ 2-րդ մաս, որի համաձայն՝ քաղաքապետի</p>		
--	--	--	--	--	--

			<p>ընտրության անցկացման կարգը սահմանվում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, Նախագծի 32-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 142.2-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է: Նույն առաջարկը վերաբերելի է նաեւ Նախագծի 32-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությանը վերաբերող 142.3-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորմանը:</p>		
11		Նախագծի 32-րդ հոդված	<p>Նախագծի 32-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությանը վերաբերող 142.3-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսվում է հետեւյալ կարգավորումը. «Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունն անցկացվում է սույն օրենսգրքի 142.2-րդ հոդվածի 6-9-րդ մասերով սահմանված կարգով»: Մինչդեռ Նախագծի 32-րդ հոդվածով Օրենսգրքում</p>	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է

			լրացվող 142.2-րդ հոդվածի 5-րդ մասը վերաբերում է քվեաթերթիկի միջոցով քվեարկության անցկացմանը, ուստի, կարծում ենք, Նախագծի 32-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 142.3-րդ հոդվածի 3-րդ մասում պետք է հղում կատարել նաև Նախագծի 32-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 142.2-րդ հոդվածի 5-րդ մասին:		
12	Նախագծի 34-րդ հոդված	Նախագծի 34-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Բոլոր օրենսդրական ակտերն էլ նախատեսում են փոփոխություն կամ լրացում:	Չի ընդունվել	
13	Նախագծի 34-րդ հոդված	Նախագծի 34-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսվում է հետևյալ կարգավորումը. «2023 թվականի հունվարի 1-ից տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմինն իր պաշտոնական համացանցային կայքէջում	Նախատեսվող կարգավորումն այլ հոդվածում ներառելը խնդրահարույց է: Այդ իսկ պատճառով այն ներառվել է	Չի ընդունվել	

			<p>վարում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետների վերաբերյալ շտեմարան»:</p> <p>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի նորմատիվ իրավական ակտի կառուցվածքին վերաբերող 13 - րդ հոդվածի համաձայն. «() 4. Նորմատիվ իրավական ակտն ունենում է անցումային դրույթներ, եթե՝</p> <p>1) նորմատիվ իրավական ակտը լրիվ գործողության մեջ դնելու համար պահանջվում են ժամկետներ կամ որոշակի պայմաններ, կամ</p> <p>2) որոշակի ժամկետների (սահմանափակ ժամանակահատվածի) կամ նորմատիվ իրավական ակտի հիմնական մասով սահմանված պայմանների համար անհրաժեշտ է սահմանել իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերից տարբերվող այլ նորմեր, կամ</p> <p>3) նորմատիվ իրավական ակտի հիմնական մասով սահմանված նորմերի ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ է սահմանել</p>	<p>անցումային դրույթներում:</p>	
--	--	--	--	---------------------------------	--

			<p>ըստ որոշակի անձանց շրջանակի կամ տարածքի՝ ակտի հիմնական մասով սահմանված նորմերի գործողության համար այլ նորմեր:</p> <p>5. Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ()</p> <p>6. Նորմատիվ իրավական ակտը պարունակում է անցումային դրույթներ, եթե անձի իրավական վիճակը բարելավող նորմատիվ իրավական ակտին նախատեսվում է տալ հետադարձ ուժ, կամ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ տալու համար անհրաժեշտ է սահմանել համապատասխան նորմեր: ()» :</p> <p>Հիմք ընդունելով վերագրյալը՝</p>		
--	--	--	--	--	--

			<p>կարծում ենք, որ Նախագծի օրենքի ուժի մեջ մտնելուն եւ անցումային դրույթներին վերաբերող 34-րդ հոդվածում չի կարող նախատեսվել՝ 2023 թվականի հունվարի 1-ից տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից պաշտոնական համացանցային կայքէջում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետների վերաբերյալ շտեմարան վարելու պարտականության վերաբերյալ կարգավորում:</p>		
14		<p>«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի 1-ին հոդված</p>	<p>Նախագծի 1-ին հոդվածի «16-րդ հոդվածի 3-րդ մասի, 20-րդ հոդվածի 1-ին մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 9-րդ մասի «Երեւան, Գյումրի, Վանաձոր քաղաքների» բառերը փոխարինել «համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների» բառերով» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «16-րդ հոդվածի 3-րդ մասի, 20-րդ հոդվածի 1-ին մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 9-րդ մասի «Երեւան, Գյումրի, Վանաձոր քաղաքների» եւ</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխությունը</p>	<p>Ընդունվել է</p>

			«Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքների» բառերը փոխարինել «համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների» բառերով» ձեւակերպումով՝ հաշվի առնելով այն, որ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենք ի 20-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվում է «Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքների» ձեւակերպումը:		
15	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում արված վրիպակն առաջարկում ենք ուղղել՝ «Գյումրի եւ Վանաձորի» բառերն զլխատառերով գրելով:	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	
16	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենք ի 56-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին մասում ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքով» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով» ձեւակերպումով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է	

			իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մաս ը: Նույն առաջարկը վերաբերելի է նաեւ ««Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծ ի 1-ին հոդվածով «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք ի 17-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառվող եւ 2-րդ հոդվածով «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենք ի 41-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2-րդ մասի ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքով» ձեւակերպումներին:		
17		Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի անցումային դրույթներին վերաբերող 102-րդ հոդվածում լրացվում է նոր՝ 5-րդ մաս, այն է՝ «Սույն օրենքի 68-րդ եւ 75-րդ հոդվածների դրույթները չեն գործում այն համայնքների մասով, որոնց ավագանին ձեւավորվել է համամասնական	Նշված դեպքը նախատեսվում է կոնկրետ ժամանակահատվածի և դեպքի համար	Չի ընդունվել

			<p>ընտրակարգով, իսկ համայնքի ղեկավարն ընտրվել է մեծամասնական ընտրակարգով եւ շարունակում է պաշտոնավարել»:</p> <p>Կարծում ենք, նպատակահարմար է նշված կարգավորումը նախատեսել ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի անցումային դրույթներում:</p> <p>Բացի այդ, հարկ է նկատել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենք ի 68-րդ հոդվածը վերաբերում է համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելուն, մինչդեռ 75-րդ հոդվածը վերաբերում է համայնքի ղեկավարի լիազորությունների դադարմանը եւ դադարեցմանը. «1. Համայնքի ղեկավարի լիազորությունները դադարում են նորընտիր համայնքի ղեկավարի կողմից լիազորություններն ստանձնելու պահից:</p> <p>2. Համայնքի ղեկավարի</p>		
--	--	--	---	--	--

			<p>լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա՝</p> <ol style="list-style-type: none"> 1) կորցրել է ավագանու անդամի ընտրական իրավունքը. 2) համայնքի ղեկավարի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում. 3) հրաժարական է տվել. 4) կորցրել է ավագանու անդամի լիազորությունը. 5) ստացել է այլ երկրի քաղաքացիություն. 6) մահացել է: <p>3. Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են սույն օրենքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով անվստահություն հայտնելու դեպքում»:</p> <p>Հիմք ընդունելով վերագրյալը, կարծում ենք, որ նպատակահարմար չէ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 75-րդ հոդվածին հղում կատարելը:</p>		
18		<p>«Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված</p>	<p>Նախագծի 2-րդ հոդվածի «41-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխությունը</p>	<p>Ընդունվել է</p>

			«Օրենքի 41-րդ հոդվածում լրացնել նոր՝ 2-րդ մաս» ձեակերպումով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17 -րդ հոդվածի 4 -րդ մասը եւ33 -րդ հոդվածի 3 -րդ մասը:		
--	--	--	--	--	--